



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

21.03.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/42**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝
Ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Ալտա Վիպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Գրիգորյանի

«Ալտա Վիպ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 27.02.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 27.02.2019թ.)

Ռեսուլտատներով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2576-19 գրությամբ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին գնումների
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու
նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝
Պատվիրատու) 12.02.2019թ. թիվ 1/18-3/[1286075]-19 գրությունների պատճենների հիման
վրա, 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2576-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 04.03.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը:

«2018թ. հունիսի 15-ին «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված՝ նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի ուժով (ծառայությունը չի մատուցվել կատարողի կողմից):

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը հայտնել է, որ www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2019թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 15.06.2018թ. կնքված՝ նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագիրը ՀՀ

Ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի ուժով:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն պետք է իրականացնի ք. Երևան, Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76.8 քմ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումը՝ 2007թ. դրությամբ: Պայմանագրի գինը կազմել է 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

-մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

- խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ընկերությունը հայտնել է, որ 15.06.2018թ. պայմանագիրը կնքելուց հետո «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն մեկնել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ծառայություններ մատուցվելիք օբյեկտ, այն է՝ ք. Երևան Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով օբյեկտ՝ աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու և նշված գույքը գնահատելու համար:

Սակայն օբյեկտի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն պետք է ուսումնասիրի և գնահատի «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով չնախատեսված՝ Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. Մակերեսով 4-րդ կարգի վթարային աստիճան ունեցող քանդման ենթակա շենք և ավելին, ընդ որում ներկայացնի քանդման ենթակա վթարային անշարժ գույքի շուկայական արժեքը՝ 2007թ. դրությամբ:

Ընկերությունը հայտնել է, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն իր պարտավորությունը պատշաճ կատարելու և 2007թ. դրությամբ շենքի շուկայական արժեքը հիմնավոր գնահատելու համար 26.06.2018թ. թիվ 9/06/0238 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը

և հայտնել է հետևյալը.

Ի կատարումն «Պետության կարիքների համար նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման» պետական գնման թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ գնահատման աշխատանքների կատարման ընթացքում պարզվել են մի շարք հանգամանքներ: Վերջիններիս մասով անհրաժեշտ է ստանալ պարզաբանումներ գնահատման աշխատանքների հետագա բնականոն ընթացքը ապահովելու համար:

Մասնավորապես՝

1. ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով պայմանագրին կից տեխնիկական բնութագրում տրված է գնահատել ք. Երևան Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ մակերեսով անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատում 2007թ. դրությամբ: Գնահատողին հասանելի տեղեկատվության համաձայն՝ նշված անշարժ գույքը 2007թվականից համարվում է 4-րդ կարգի վթարային աստիճան քնդման ենթակա գույք: Խնդրում եմ տալ պարզաբանում գնահատման աշխատանքները իրականացնել մինչվթարային վիճակում թե ոչ, քանի որ 4-րդ կարգի վթարային քանդման ենթակա գույքի համար շուկայական արժեքի հաշվարկումը իրատեսական չէ:

2. Համաձայն գնահատողի կողմից կատարված տեղազննության՝ աշխատանքների (20.06.2018թ.) նշված գույքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը, սակայն գույքի սեփականատիրոջ պնդմամբ՝ 2007 թվականի դրությամբ այն ունեցել է միջին վերանորոգում: Խնդրում եմ տալ պարզաբանում գույքի ներքին վերանորոգման (հարդարման) վիճակի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ խնդրում եմ նաև վերանայել պայմանագրում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը այն երկարացնելով 15 օրացույցային օրով:

Ընկերությունը հայտնել է, որ ի պատասխան վերոնշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.07.2018թ. թիվ 1/11-5/13165-1 գրությամբ հայտնել է հետևյալը. «Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքի գնահատումը պետք է իրականացնել 2007թ. դրությամբ՝ անկախ տվյալ դրությամբ գույքի վթարային աստիճանի: Միաժամանակ, հայտնում ենք, որ գույքի ներքին վերանորոգման

/հարդարման/ վիճակի վերաբերյալ տեղեկատվության ՀՀ ֆինանսների նախարարությունը չի տիրապետում...»:

Ի լրումն վերոնշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.07.2018թ. գրությամբ ներկայացրել է նաև Ռադիկ Օհանջանյանի 13.07.2018թ. գրության պատճենը, համաձայն որի՝ Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքի վիճակի վերաբերյալ լուսանկարներ և փաստաթղթեր /բացի սեփ. իրավունքի գրանցման վկայականից/ չեն պահպանվել: Ինչ վերաբերվում է 2007թ.-ի դրությամբ տարածքի ներքին հարդարման փաստացի վիճակին՝ ապա հայտնվել է, որ Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքը ապահովված է եղել բոլոր կոմունալ ենթակառուցվածքներով /ջուր, հոսանք, գազ, օդորակիչ և այլն/, ինչպես նաև տարածքը ունեցել է միջին վերանորոգում:

Ի պատասխան վերոնշված գրության՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը 24.07.2018թ. գրությամբ հայտնել է.

Ի կատարումն պետության կարիքների համար նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի, ինչպես նաև հիմք ընդունելով Ձեր կողմից ներկայացված 18.07.2018թ. թիվ 1/11-5/13165-18 և 19.07.2018թ. թիվ 1/11-5/13251-18 գրությունները՝ հայտնում եմ, որ համաձայն գնահատողի կողմից կատարված տեղազննության աշխատանքների (20.06.2018թ.) ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը, սակայն գույքի սեփականատիրոջ պնդմամբ 2007 թվականի դրությամբ այն ունեցել է միջին վերանորոգում:

Խնդրում եմ տալ պարզաբանում գնահատման աշխատանքները իրականացնել՝ հիմք ընդունելով 19.07.2018թ. թիվ 1/11-5/13251-18 գրությանը կից Ռադիկ Օհանջանյանի կողմից ներկայացված ներքին վերանորոգման (հարդարման) վիճակի վերաբերյալ բնութագիրը, թե նշված հասցեում գտնվող գույքը դիտարկել 20.06.2018թ. գույքի տեղազննության աշխատանքների արդյունքներով, այն է ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նշված պարզաբանումը ունի էական նշանակություն գնահատման աշխատանքների հետագա բնականոն ընթացքը ապահովելու համար, այլապես չենք կարող իրականացնել ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի գնահատման աշխատանքները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ խնդրում են նաև վերանայել պայմանագրում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը այն երկարացնելով ևս 15 օրացույցային օրով:

Այնուհետև ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.08.2018թ.թիվ 1/11-5/13835-18 գրությամբ հայտնել է, մասնավորապես՝ հաշվի առնելով 04.07.2018թ. կնքված համաձայնագրով, Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետն արդեն իսկ մեկ անգամ երկարաձգել է 15 օրացույցային օրով, որը նույնպես լրացել է, ուստի գտնում ենք, որ Պայմանագրի ժամկետը ենթակա չէ կրկին երկարաձգման:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը պետք է պարտադիր պարունակի՝ գնահատվող անշարժ գույքի ելակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրները և անշարժ գույքի տեղազննության արդյունքները, գնահատման օբյեկտի նկարագիրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունում չեն թույլատրվում անշարժ գույքի գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ և եզրակացություններ:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձինք իրավունք ունեն գնահատման ընթացքում անշարժ գույքի գնահատման պատվիրատուից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, ծառայողական և առևտրային գաղտնիք համարվող տեղեկության:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու և պայմանագրով նախատեսված պայմանների խախտման դեպքում հրաժարվելու անշարժ գույքի գնահատման իրականացումից:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայացված փաստերի և հիմնավորումների ուսմանասիրմամբ պարզ է դառնում, որ Պայմանագրի տեխնիկական-բնութագրով ք. Երևան, Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. Մակերեսով օբյեկտը՝ հանդիսանում է 4-րդ կարգի վթարային աստիճան ունեցող քանդման ենթակա շենք, ինչը տեխնիկական-բնութագրով արձանագրված չի եղել:

Ընկերությունը նշել է, որ իր՝ 26.06.2018թ. և 24.07.2018թ. գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել էր առաջացած խնդրի մասին և խնդրել տալ պարզաբանում գույքի ներքին վերանորոգման /հարդարման/ վիճակի մասին: Այլ կերպ ասած, ղեկավարվելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ գնահատման ընթացքում Պատվիրատուից պահանջել է անհրաժեշտ տեղեկություններ, քանի որ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը խստիվ պահանջում են, որպեսզի անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը պարտադիր պարունակի գնահատվող անշարժ գույքի ելակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրները և անշարժ գույքի տեղազննության արդյունքները, գնահատման օբյեկտի նկարագիրը, և միևնույն ժամանակ արգելում անշարժ գույքի գնահատման հաշվետվությունում անելիչ հիմնավորված մեկնաբանություններ և եզրակացություններ:

Մինչդեռ ինչպես երևում է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև առկա գրագրությունից՝ Պատվիրատուի կողմից նշված տեղեկատվությունը չի տրամադրվել, ինչի պայմաններում գույքի գնահատման հաշվետվությունը չէր կարող համապատասխանել ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին (չէր պարունակի անշարժ գույքի ելակետային տվյալներ, դրանց հավաստիության աղբյուրները և անշարժ գույքի տեղազննության արդյունքները, իսկ եզրակացությունները կլինեին չհիմնավորված):

Ընկերությունը հայտնել է, որ նման դեպքերում, այսինքն պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու և պայմանագրով նախատեսված պայմանների խախտման դեպքում գնահատող անձը անգամ իրավունք ուներ ընդհանրապես հրաժարվելու անշարժ գույքի գնահատման իրականացումից:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից գնահատվող անշարժ գույքի ելակետային տվյալները և դրանց հավաստիության աղբյուրները չտրամադրելու

պայմաններում «Ալտա Վիպ» ՍՊԸ-ն զրկվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման հաշվետվություն կազմելու և ներկայացնելու հնարավորությունից, և համապատասխանաբար՝ զրկվել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Ալտա Վիպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնածորևէպարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՅ-ԱՄ-2019/42 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:50-ի և 05.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 05.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.02.2019թ. թիվ 1/18-3/1286075-19 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից մեկի՝ «Ալտա Վիպ» ՍՊԸ-ի միտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը

հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/42 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:50-ի և 05.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն) ստանձնում է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսվել է իրականացնել ք. Երևան, Էրեբունի համայնքի Գաջեգործների փող 40 հասցեում գտնվող 76.8 քմ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատում 2007թ. դրությամբ, իսկ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

5. Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6. Նույն կետի 7.5 ենթակետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7. Նույն կետի 7.8 ենթակետի համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացույցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8. 15.06.2018թ. կնքված թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 04.07.2018թ. կնքվել է Համաձայնագիր թիվ 1-ը, որի 1.1 կետով սահմանվել է, որ մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացույցային օրով:

9. Ընկերությանն ուղղված գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատուցեր նյութական արժեքների գնահատման ծառայություններ, սակայն ծառայության մատուցումը չի իրականացվել կատարողի կողմից:

Ամփոփելով, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 13-ից միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2018թ. թիվ 01.1/26-3/2576-19 և 12.02.2019թ. թիվ 1/18-3/1286075-19 գրությունները՝ կից փաստաթղթերով, «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի 04.03.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն) ստանձնում է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսվել է իրականացնել ք. Երևան, Էրեբունի համայնքի Գաջեգործների փող 40 հասցեում գտնվող 76.8 քմ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատում 2007թ. դրությամբ, իսկ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ

մտնելուց հետո պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Նույն կետի 7.5 ենթակետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Նույն կետի 7.8 ենթակետի համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

15.06.2018թ. կնքված թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 04.07.2018թ. կնքվել է Համաձայնագիր թիվ 1-ը, որի 1.1 կետով սահմանվել է, որ մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացուցային օրով:

Ընկերությանն ուղղված գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատուցեր նյութական

արժեքների գնահատման ծառայություններ, սակայն ծառայության մատուցումը չի իրականացվել կատարողի կողմից:

Ամփոփելով, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 13-ից միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Ընկերությունը հայտնել է, որ 15.06.2018թ. պայմանագիրը կնքելուց հետո «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն մեկնել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ծառայություններ մատուցվելիք օբյեկտ, այն է՝ ք. Երևան Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով օբյեկտ՝ աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու և նշված գույքը գնահատելու համար:

Սակայն օբյեկտի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն պետք է ուսումնասիրի և գնահատի «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով չնախատեսված՝ Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով 4-րդ կարգի վթարային աստիճան ունեցող քանդման ենթակա շենք և ավելին ներկայացնի քանդման ենթակա վթարային անշարժ գույքի շուկայական արժեքը՝ 2007թ. դրությամբ:

Ընկերությունը հայտնել է, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն իր պարտավորությունը պատշաճ կատարելու և 2007թ. դրությամբ շենքի շուկայական արժեքը հիմնավոր գնահատելու համար 26.06.2018թ. թիվ 9/06/0238 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Ի կատարումն «Պետության կարիքների համար նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման» պետական գնման թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ գնահատման աշխատանքների կատարման ընթացքում պարզվել են մի շարք հանգամանքներ: Վերջիններիս մասով անհրաժեշտ է ստանալ պարզաբանումներ գնահատման աշխատանքների հետագա բնականոն ընթացքը ապահովելու համար:

Մասնավորապես՝

1. ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով պայմանագրին կից տեխնիկական բնութագրում տրված է գնահատել ք. Երևան Էրեբունի համայնքի Գաջեգործների փող. 40 հասցեում

գտնվող 76,8 քմ մակերեսով անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատում 2007թ. դրությամբ: Գնահատողին հասանելի տեղեկատվության համաձայն՝ նշված անշարժ գույքը 2007թվականից համարվում է 4-րդ կարգի վթարային աստիճան քանդման ենթակա գույք: Խնդրում եմ տալ պարզաբանում գնահատման աշխատանքները իրականացնել մինչվթարային վիճակում թե ոչ, քանի որ 4-րդ կարգի վթարային քանդման ենթակա գույքի համար շուկայական արժեքի հաշվարկումը իրատեսական չէ:

2. Համաձայն գնահատողի կողմից կատարված տեղազննության՝ աշխատանքների (20.06.2018թ.) նշված գույքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը, սակայն գույքի սեփականատիրոջ պնդմամբ՝ 2007 թվականի դրությամբ այն ունեցել է միջին վերանորոգում: Խնդրում եմ տալ պարզաբանում գույքի ներքին վերանորոգման (հարդարման) վիճակի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ խնդրում եմ նաև վերանայել պայմանագրում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը այն երկարացնելով 15 օրացույցային օրով»:

Ընկերությունը հայտնել է, որ ի պատասխան վերոնշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.07.2018թ. թիվ 1/11-5/13165-1 գրությամբ հայտնել է հետևյալը. «Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքի գնահատումը պետք է իրականացնել 2007թ. դրությամբ՝ անկախ տվյալ դրությամբ գույքի վթարային աստիճանի: Միաժամանակ, հայտնում ենք, որ գույքի ներքին վերանորոգման /հարդարման/ վիճակի վերաբերյալ տեղեկատվության ՀՀ ֆինանսների նախարարությունը չի տիրապետում...»:

Ի լրումն վերոնշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.07.2018թ. գրությամբ ներկայացրել է նաև Ռադիկ Օհանջանյանի 13.07.2018թ. գրության պատճենը, համաձայն որի՝ Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքի վիճակի վերաբերյալ լուսանկարներ և փաստաթղթեր /բացի սեփ. իրավունքի գրանցման վկայականից/ չեն պահպանվել: Ինչ վերաբերվում է 2007թ.-ի դրությամբ տարածքի ներքին հարդարման փաստացի վիճակին՝ ապա հայտնվել է, որ Գաջեգործների փող. 40 հասցեում գտնվող 76,8 քմ. մակերեսով ոչ բնակելի տարածքը ապահովված է եղել բոլոր կոմունալ ենթակառուցվածքներով /ջուր, հոսանք, գազ, օդորակիչ և այլն/, ինչպես

նաև տարածքը ունեցել է միջին վերանորոգում:

Ընկերությունը հայտնել է, որ ի պատասխան վերոնշված գրության՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը 24.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի կատարումն պետության կարիքների համար նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26 պայմանագրի, ինչպես նաև հիմք ընդունելով Ձեր կողմից ներկայացված 18.07.2018թ. թիվ 1/11-5/13165-18 և 19.07.2018թ. թիվ 1/11-5/13251-18 գրությունները՝ հայտնում եմ, որ համաձայն գնահատողի կողմից կատարված տեղազննության աշխատանքների (20.06.2018թ.) ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը, սակայն գույքի սեփականատիրոջ պնդմամբ 2007 թվականի դրությամբ այն ունեցել է միջին վերանորոգում:

Ընկերությունը խնդրել է տալ պարզաբանում՝ գնահատման աշխատանքները իրականացնել՝ հիմք ընդունելով 19.07.2018թ. թիվ 1/11-5/13251-18 գրությանը կից Ռադիկ Օհանջանյանի կողմից ներկայացված ներքին վերանորոգման (հարդարման) վիճակի վերաբերյալ բնութագիրը, թե նշված հասցեում գտնվող գույքը դիտարկել 20.06.2018թ. գույքի տեղազննության աշխատանքների արդյունքներով, այն է ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը չունի ներքին վերանորոգում, բացակայում են պատուհանները և միջսենյակային պատերի մի մասը:

Միևնույն ժամանակ հայտնելով, որ նշված պարզաբանումը ունի էական նշանակություն գնահատման աշխատանքների հետագա բնականոն ընթացքը ապահովելու համար, այլապես չի կարող իրականացնել ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի գնահատման աշխատանքները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ խնդրել է նաև վերանայել պայմանագրում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը այն երկարացնելով ևս 15 օրացույցային օրով»:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.08.2018թ. թիվ 1/11-5/13835-18 գրությամբ հայտնել է հետևյալ. «Մասնավորապես՝ հաշվի առնելով 04.07.2018թ. կնքված

համաձայնագրով, Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետն արդեն իսկ մեկ անգամ երկարաձգվել է 15 օրացուցային օրով, որը նույնպես լրացել է, ուստի գտնում ենք, որ Պայմանագրի ժամկետը ենթակա չէ կրկին երկարաձգման»:

Այսպիսով ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով գնման պայմանագիրը, «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան գրությունները, Պատվիրատուի կողմից Պայմանագիրը լուծելու իրավական հիմքը, այն է՝ Պայմանագրի 2.1.3 կետը, արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգվել է 15 օրացուցային օրով և Ընկերությանը հնարավորություն է տրվել ծառայությունը մատուցել Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 35 օրացուցային օրվա ընթացքում, այնուամենայնիվ Ընկերությունը չի իրականացրել ՀՀ, ք. Երևան Գաջեգործների փողոց, թիվ 40 շենքի 76,8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի գնահատման աշխատանքները կատարելու պարտականությունը, քանի որ Ընկերությունը ունենալով երկու հակասական և իրարամերժ տվյալներ և միաժամանակ չունենալով անշարժ գույքի ելակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրները և անշարժ գույքի տեղազննության արդյունքները, օբյեկտիվորեն գրկված է եղել Պայմանագրով սահմանված ժամկետում իրականացնելու հնարավորությունից, որոնց վերաբերյալ Ընկերությունը համապատասխան գրություններով տեղեկացրել է Պատվիրատուին:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձինք իրավունք ունեն գնահատման ընթացքում անշարժ գույքի գնահատման պատվիրապետից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, ծառայողական և առևտրային գաղտնիք համարվող տեղեկության:**

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **պատվիրապետի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չգրամաղբելու և պայմանագրով նախատեսված պայմանների խախտման դեպքում հրաժարվելու անշարժ գույքի գնահատման իրականացումից:**

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է, որ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը պետք է պարտադիր պարունակի գնահատվող անշարժ գույքի ելակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրները և անշարժ գույքի տեղագնության արդյունքները, գնահատման օբյեկտի նկարագիրը, և միևնույն ժամանակ արգելում է անշարժ գույքի գնահատման հաշվետվությունում անել չհիմնավորված մեկնաբանություններ և եզրակացություններ:

Այսպիսով, նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2576-19 գրությամբ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ